ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԿԿ-ՄԱԱՊՁԲ-26/11

ք. Երևան «07» 05 2026թ.

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Աշոտ Վարդանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տիգրան Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահպնջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 419000 /չորս հարյուր տասնինը հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի

կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ միջուկային անվտանգության	«Սմարթլայն» ՍՊԸ
կարգավորման կոմիտե	ք. Երևան, Վարդանանց 110
Հասցե ք.Երևան, Տիգրան Մեծի 4	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Բանկ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1150009537660100
ՀՀ 900011040020	ՀՎՀՀ 01548908
ՀՎՀՀ 02705793	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար	Տ. Ղարիբյան
Ա.Վարդանյան	
---	---
VARDANYAN ASHOT 3903660221	/ստորագրություն/ Կ.Տ
Digitally signed by VARDANYAN ASHOT 3903660221 DN: C=AM, SN=ՎԱՐԴԱՆՅԱՆ, G=ԱՇՈՏ, SERIALNUMBER=65dd9a64ac7a, CN=VARDANYAN ASHOT 3903660221 Reason: I am the author of this document Location: Date: 2026.05.07 14:21:26+04'00' Foxit PDF Reader Version: 2024.2.1	Digitally signed by GHARIBYAN TIGRAN 1801840415 Date: 2026.05.07 10:30:04 AMT

Հավելված N 1
«07» 05 2026թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԱՊՁԲ-26/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									Հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	30192121/1	գրիչ գնդիկավոր	ցանկացած	Գնդիկավոր, կապույտ գույնի, տարբեր տեսակի կառուցվածքով:	Հատ	170	13600	80	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	40	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										40	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
2	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	ցանկացած	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ N 10-մմ :	տուփ	100	1500	15	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	10	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										5	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
3	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	ցանկացած	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24 մմ/6 մմ , 26 մմ/6 մմ :	տուփ	100	2000	20	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	10	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										10	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
4	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային	ցանկացած	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար, 8 գ:	հատ	200	1800	9	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	9	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										-	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.

5	30192720/1	Գծանշիչ	ցանկացած	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով:	հատ	250	8000	32	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	10	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										22	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
6	30192920/1	Շտրիխ /ուղղիչ հեղուկներ վրձինով/	Ցանկացած	Շտրիխ /ուղղիչ հեղուկներ վրձինով , տպագրված տեքստը մաքրելու համար/	հատ	400	4000	10	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	5	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										5	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
7	30197230/1	Թղթապանակ1	Ցանկացած	Արագակար պլաստիկ, կարելու մետաղական ամրակով, 10մմ լայն, A4 ձևաչափի թղթերի համար	հատ	300	3000	10	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	10	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										-	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
8	30197230/2	Թղթապանակ2	Ցանկացած	թղթապանակ պլաստիկ, գունավոր, տուփ առանց կարելու հարմարանքի, ամրացվելու հարմարանքով, լայնություն 40մմ	հատ	700	56000	80	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	50	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										30	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
9	30197232/1	թղթապանակ, արագակար, թղթյա	Ցանկացած	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	100	1200	12	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	5	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										7	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
10	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա	Ցանկացած	Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3 , հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ:	հատ	200	20000	100	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	55	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										45	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
11	30192130/1	մատիտներ	Ցանկացած	Հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ /HB/:	հատ	100	3600	36	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	16	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										20	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.

12	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան, տողանի, սպիտակ էջերով	Ցանկացած	Կապույտ գույնի, հաստ և ամուր կազմով գրասենյակային գիրք, մատյան, 70էջ, տողանի, սպիտակ էջերով	հատ	1600	8000	5	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	2	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										3	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
13	30197622/2	թուղթ, A4 ֆորմատի	Ցանկացած	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ:	կգ	920	174800	190	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	100	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										90	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ
14	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	Ցանկացած	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, տարբեր չափերի, տրցակներով	հատ	250	2500	10	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										10	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
15	30234630/1	ֆլեշ հիշողություն, 32GB	Ցանկացած	ֆլեշ հիշողություն 32GB, USB ինտերֆեյսը՝ USB 2.3	հատ	4500	22500	5	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										5	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
16	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Ցանկացած	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ:	հատ	10	10000	1000	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	800	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										200	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ.
17	30192231/1	Սկոչ	Ցանկացած	Սկոչ, կպչող ժապավեն, թափանցիկ, 15մմ*33մ:	հատ	200	1000	5	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										5	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ
18	22811150/1	Նոթատետր	Ցանկացած	Նոթատետր գրասենյակային, մինչև 100 էջ, A 5 չափի, կոշտ, կաշվին փոխարինող կազմով	հատ	1500	15000	10	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	Ի կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										10	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ

19	30237460/1	Համակարգչային ստեղնաշար	Ցանկացած	Համակարգչային ստեղնաշար	հատ	7000	35000	5	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	2	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										3	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ
20	30197322/1	Կարիչ 20-50 թերթի համար	Ցանկացած	Կարիչ 20-50 թերթի համար, կարելու մետաղական մասով, 24/6 ասեղով	հատ	2500	7500	3	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										3	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ
21	30237411/1	Մկնիկ, համակարգչային, լարով	Ցանկացած	Մկնիկ, համակարգչային, լարով	հատ	2500	12500	5	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										5	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ
22	30192100/1	Ռետին	ցանկացած	Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար	հատ	200	2000	10	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	10	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										-	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ
23	30192125/1	Մարկերներ, գրատախտակի	ցանկացած	մարկերներ, գրատախտակի	հատ	300	6000	20	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	10	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										10	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ
24	30197333/1	Դակիչ փոքր	ցանկացած	Դակիչ փոքր, առնվազն 20 թերթ դակելու հնարավորությամբ	հատ	2500	7500	3	ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	I կիսամյակ- մինչև 30.06.2026թ.
										3	IV եռամսյակ մինչև 25.12.2026թ

Լայրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի շվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ դրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-

ԳՆՈՐԴ

ՀՀ միջուկային անվտանգության
կարգավորման կոմիտե
Հասցե ք.Երևան, Տիգրան Մեծի 4
Բանկ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02705793
Գլխավոր քարտուղար
Ա.Վարդանյան

/ստորագրություն/

VARDANYAN ASHOT 3903660221

Digitally signed by VARDANYAN ASHOT 3903660221
DN: C=AM, SN=ՎԱՐԴԱՆՅԱՆ, G=ԱՇՈՏ, SERIALNUMBER=65dd9a64ac7a, CN=VARDANYAN ASHOT 3903660221
Reason: I am the author of this document
Location:
Date: 2026.05.07 14:22:09+04'00'
Foxit PDF Reader Version: 2024.2.1

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝
Տ. Ղարիբյան

/ստորագրություն/

Digitally signed by GHARIBYAN TIGRAN 1801840415
Date: 2026.05.07 10:30:41 AMT

Կ.Տ.

Հավելված N 2
«07» 05 2026 թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԱՊՁԲ-26/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

հրավերով նախատեսված ապրանքի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30192121/1	գրիչ գնդիկավոր	-	-	-	-	6800	6800	6800	6800	6800	13600	13600	13600	13600
2	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր					1000	1000	1000	1000	1000	1500	1500	1500	1500
3	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	-	-	-	-	1000	1000	1000	1000	1000	2000	2000	2000	2000
4	30192710/2	սոսնձամատիտ, գրասենյակային	-	-	-	-	1800	1800	1800	1800	1800	1800	1800	1800	1800
5	30192720/1	Գծանշիչ	-	-	-	-	2500	2500	2500	2500	2500	8000	8000	8000	8000
6	30192920/1	Շտրիխ /ուղղիչ հեղուկներ վրձինով/	-	-	-	-	2000	2000	2000	2000	2000	4000	4000	4000	4000
7	30197230/1	Թղթապանակ1	-	-	-	-	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
8	30197230/2	Թղթապանակ2	-	-	-	-	35000	35000	35000	35000	35000	56000	56000	56000	56000
9	30197232/1	թղթապանակ, արագակար, թղթյա	-	-	-	-	500	500	500	500	500	1200	1200	1200	1200
10	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա	-	-	-	-	11000	11000	11000	11000	11000	20000	20000	20000	20000
11	30192130/1	մատիտներ	-	-	-	-	1600	1600	1600	1600	1600	3600	3600	3600	3600
12	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան, տողանի, սպիտակ էջերով	-	-	-	-	3200	3200	3200	3200	3200	8000	8000	8000	8000
13	30197622/2	թուղթ, A4 ֆորմատի	-	-	-	-	92000	92000	92000	92000	92000	174800	174800	174800	174800

14	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	-	-	-	-	-	-	-	-	-	2500	2500	2500	2500
15	30234630/1	ֆլեշ հիշողություն, 32GB	-	-	-	-	-	-	-	-	-	22500	22500	22500	22500
16	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	-	-	-	-	8000	8000	8000	8000	8000	10000	10000	10000	10000
17	30192231/1	Սկոչ	-	-	-	-	-	-	-	-	-	1000	1000	1000	1000
18	22811150/1	Նոթատետր	-	-	-	-	-	-	-	-	-	15000	15000	15000	15000
19	30237460/1	Համակարգչային ստեղնաշար					14000	14000	14000	14000	14000	35000	35000	35000	35000
20	30197322/1	Կարիչ 20-50 թերթի համար	-	-	-	-	-	-	-	-	-	7500	7500	7500	7500
21	30237411/1	Մկնիկ, համակարգչային, լարով	-	-	-	-	-	-	-	-	-	12500	12500	12500	12500
22	30192100/1	Ռետին	-	-	-	-	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
23	30192125/1	Մարկերներ, գրատախտակի	-	-	-	-	3000	3000	3000	3000	3000	6000	6000	6000	6000
24	30197333/1	Դակիչ փոքր	-	-	-	-	-	-	-	-	-	7500	7500	7500	7500

ճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ միջուկային անվտանգության
կարգավորման կոմիտե
Հասցե ք. Երևան, Տիգրան Մեծի 4
Բանկ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02705793
Գլխավոր քարտուղար
Ա.Վարդանյան

VARDANYAN ASHOT 3903660221

Digitally signed by VARDANYAN ASHOT 3903660221
DN: C=AM, SN=ՎԱՐԴԱՆՅԱՆ, G=ԱՇՈՏ, SERIALNUMBER=65dd9a64ac7a, CN=VARDANYAN ASHOT 3903660221
Reason: I am the author of this document
Location:
Date: 2026.05.07 14:22:41+04'00'
Foxit PDF Reader Version: 2024.2.1

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝
Տ. Ղարիբյան

Digitally signed by GHARIBYAN TIGRAN 1801840415
Date: 2026.05.07 10:31:09 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«07» 05 2026 թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԱՊՁԲ-26/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«07» 05 2026թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԱՊՁԲ-26/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն